# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՊՈՒՏԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կապուտան համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Կապուտան 1-ին փողոց թիվ 26, հեռ. (098) 42-88-38, (077) 06-32-01. kaputangyuxapetaran@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հունիս 2017 թվականի N 24

*ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՆՎԵՐ ՇԱՀԵՆԻ ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻ, ՍԻՐԱՆՈՒՇ ԱՐԱՄԱՅԻՍԻ ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻ, ԱՎԱԳ ՆՎԵՐԻ ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻ , ԱՐԱ ՆՎԵՐԻ ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻ ԵՎ ԱՆԴՐԱՆԻԿ ՆՎԵՐԻ ԵՆԳԻԲԱՐՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912–Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ բաժնի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 13-րդ , 22.1 կետերի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման պահանջներով, ***որոշում եմ՝***

1.Կապուտան համայնքի 3-րդ փողոց թիվ 5 հասցեում գտնվող քաղաքացիներ Նվեր Շահենի Ենգիբարյանի, Սիրանուշ Արամայիսի Ենգիբարյանի, Ավագ Նվերի Ենգիբարյանի , Արա Նվերի Ենգիբարյանի և Անդրանիկ նվերի Ենգիբարյանի ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ 07-036-029-012 կադաստրային ծածկագրի հողամասում իրենց կողմից ինքնակամ կառուցված բնակելի տունը 134,81քմ , ջրավազան 5,8քմ, զուգարանը 3,24քմ և 90,8քմ մակերեսով գոմը համարել օրինական:

2. Պարտավորեցնել քաղաքացիներ Նվեր Շահենի Ենգիբարյանին, Սիրանուշ Արամայիսի Ենգիբարյանին, Ավագ Նվերի Ենգիբարյանին , Արա Նվերի Ենգիբարյանին և Անդրանիկ նվերի Ենգիբարյանին ինքնակամ կառուցված շինությունների համար համայնքի բյուջեի N 900105217211 հաշվեհամարին մուծել՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի "Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին" N 912–Ն որոշման 13-րդ կետի և 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշմամբ հաստատված տարածագնահատման (գոտիականության) գործակիցների՝ բնակելի տան

մեկ քառակուսի մետրի համար 690 (վեց հարյուր իննսուն) ՀՀ դրամ,իսկ ջրավազանի, զուգարանի և գոմի մեկ քառակուսի մետրի համար 414 (չորս հարյուր տասնչորս) ՀՀ դրամ: Հաշվի առնել այն, որ 134,81քմ մակերեսով բնակելի տան կիսանկուղը ինքնակամ կառուցվել է մինչև 2001թվականի մայիսի 15-ը, որի օրինականացման համար վճար չի գանձվում:Բնակելի տան 1-ին հարկի ընդհանուր մակերեսը 134,81քմ է,որի օրինականացման արժեքը կազմում է 93020(իննսուներեք հազար քսան) ՀՀ դրամ,իսկ ջրավազանի, զուգարանի և գոմի ընդհանուր մակերեսը 99,84քմ է, որոնց օրինականացման արժեքը կազմում է 41334 (քառասունմեկ հազար երեք հարյուր երեսուն չորս) ՀՀ դրամ:

3.Ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը:Շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներովև չի առաջացնումհարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ